

Դակումենտ պրոֆ. Ա.Ռ. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍԱՄԱՆՆԱՐԱԿԱՆ ԽԱՍՏԱՏՔԻ ՀՐԱՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայկ. ՍՍՌ Նրեանի Պետական Մամկավարժական Խնատիութ

ԳԻՏԱԿԱՆ ԱԾԽԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համար I

Դեկտոր պրոֆ. Ար. ՂԱՐԻԲՅԱՆ

Առաջարկ և աշխատավայր
Կողմ. Բ. Կ. Կոմիտասի
14/11/40 ՀՀԴ. Հայոց

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ
1821



ԱԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒԵՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1921 թվին մեղանում ապագրվեց «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ» գիրքը Այդ գիրքը մի հետաքրքրական նորություն էր, որովհետեւ գալիս էր լուծելու պատմական մի լուրջ պրոբլեմ: Բանասիրների և ամեն մի հայագետ պատմագետի հետաքրքրությունը շարժում էր Հովհաննես Դրասխանակերտցու հետեւյալ վկայությունը.

«...վասն զի հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւսանգամ զհետեւանս զրուցաց Շապհոյ Բագրատունւոյ և մերումս ժամանակի պատմագրի . . .». «...ըստ իւրումն ժամանակի ընդգանի գոլով նորա զրուցացն ամենայնի՝ զեղջուկ բանիւ բաւական քեզ տայ պատճառս աեղեկութեան»*):

Այս վկայությամբ 10-րդ դարում ապրելիս է եղել Շապուհ Բագրատունի անունով հեղինակ, որը զրել է Բագրատունյաց պատմությունը զեղջկական լեզվով, այսինքն բարբառով: Այդ աշխատությունն անհայտ էր և, բնական է, պիտի շարժեր հայոց պատմությունը զրապվողների հետաքրքրությունը: Այդ հեղինակը, կասկածեց վեր է, որ պատմած պիտի լիներ հայոց պատմության հետաքրքրական դարաշրջաններից մեկի, 9-րդ դարի անցքերը: Հասկանալի է, որ հայոց պատմությամբ հետաքրքրվողի համար շատ կարենոր էր ունենալ այդ ժամանակակցի վկայությունը: Այդ պատճառով էլ Շապուհ Բագրատունու «Պատմությունը» որոնում էին շատերը և շատ վաղուց:

1921 թ. հրատարակված վերոհիշյալ ձեռագիրը հավակնություն ունի ներկայացվելու իրեն Շապուհ Բագրատունու պատմություն և զրա համար բավական տվյալներ ունի. «Պատմությունը» որոնում էին շատերը և շատ վաղուց:

*) Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 181—82, Թիֆլիս, 1912 թ.:

թյան» մեջ նկարագրված անցքերը սկսվում են 7-րդ դարից և տեսվում մինչև 914—20 թիվը և, ինչպես հրատարակիչներն են պնդում, շատ է տարբերվում մեր ճանաչված պատմիչների գործերի բնույթից ու ոգուց:

Նկատելի է, որ պատմության սկզբնական շրջանների մասին հաղորդածը կը ուղարկեմ է հեքիաթի բնույթ, ավելի ճիշտ՝ ֆոլկլորային բնույթ, որից եզրակացվում է, թե հեղինակը գրավոր աղբյուր չի օգտագործում, այլ իր բանագոր բածն է գրի առել, սակայն, քանի մոռենում է իր ժամանակներին, այսինքն 9-րդ դարի վերջերին, պատմությունը դառնում է ստույգ, գեղքերը հավատալի, և զգացվում է, որ շաբազզովը գեղքերի ականատեսն է կամ զրի է առնում ականատեսների պատմածից: Հեշտ է եղանակացնել որ հեղինակը ապրել է 9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի սկզբներին:

Բայց արգյուք Շապուհ Բագրատունին է դա:

Հովհաննես Դրասխանակերացու հիշատակության մեջ հետաքրքրական է նաև այն ակնարկը, թե Շապուհն, իր պատմությունը գրել է զեղչկական լեզվով:

Այդ վկայությունը շատ կարևոր է մեր լեզվի պատմության համար, քանի որ հեղինակը պարզապես վկայում է, թե այդ ժամանակ կար զեղչկական լեզու, այսինքն բարբառ, որով գրելը առանձին քաջալերանքի արժանի չի եղել: Կոսկածից վեց է, որ այդ դարում բարբառներ կային, որովհետեւ այդ ժաման վկայում է հենց ինքը պատմիչը, բայց թե ինչպիսին էին այդ բարբառները, ներկայացնում էին, արդյոք, մի որեւ սիստեմ, ունեին, արդյոք, նմանություն մեր այժմյան բարբառներին—այդ ամենի մասին տեղեկություններ չկան:

Շատ ուսումնասիրողներ բավականանում են գեղջկական համարել այնպիսի ձեռագրեր, որոնց մեջ զիտվում են մի քանի բարբառային ձեռեր, բառեր և ռճեր:

Այդ ամենից եղբակացնում են, թե գրաբար լեզուն ժողովրդի բերանում սկսել էր աղավաղվել և անա այդ ոճերն ու ձեւվերը այն ուղին են, որով գրաբարը վերածվեց բարբառների:

Այս մոտեցումը հիմնովին սխալ է, իրողությունը բոլորովին այդպես չէ:

Գրաբարի հետ զուգընթաց գոյություն են ունեցել նաև

մեր բարբառները, ժողովուրդը եղել է բարբառախոս, իսկ զբանքար լիգվով խոսել ան մտյրաքաղաքի բնակչությունը և պալատական մարզին: Գրաբար լեզուն եղել է բնդհանուր լիզու պետությունը կառավարողների համար, պետության նշանափորների համար, երկրի այդ ժամանակվա տերերի համար, այսինքն՝ տղնվական դասի համար:

Գրաբարը օգտագործվել է իբրև պետական լեզու, այսինքն այնպիսի մի լիզու, որը հասկանալի պիտի լիներ այն գասակարգի համար, որը տնօրինում էր երկրի պետական քաղաքական բախտը, երկիրը կառավարելու համար կառավարողները միամյանց լավ պիտի հասկանային, միմյանց հետ պիտի խոսեին, իսկ զբանամար նրանք պիտք է գիտենային մի ընդհանուր լեզու: Այդ ընդհանուր լեզուն կարող էր լինել մի միայն երկրի կենտրոնի, երկրի ամենահեղինակավոր վայրի լեզուն, իսկ հին Հայաստանում, ինչպես ֆեոդալական ամեն մի երկրում, ամենահեղինակավոր կենտրոնը պալատն էր և մայրաքաղաքը: Մայրաքաղաքը և պալատը հանդիսանում էին միաժամանակ կուլտուրայի կենտրոններ, նաև առևտրի ու արվեստների կենտրոններ:

Մենք չենք պնդում, որ հայ տղնվականությունը ամենուրեք խոսում էր զբաբար լիզվով. դա անհնարին էր. ամեն մի ֆեոդալական տուն առըսում էր իր կալվածակալության մեջ, այսինքն, երկրի զանազան տեղերում: Բնական է, որ ֆեոդալը պետք է իմանար այդ տեղի բարբառը, որովհետեւ տեղացի էր մեծ մասամբ), բայց մշտական առնչության մեջ լինելով պալատի և ուրիշ երկրների տղնվականների հետ՝ պետք է որ ընդուներ այն լեզուն կամ մի լեզու, որով կարողանար հաղորդվել մյուսների հետ: Այդ լեզուն հենց կարող էր լինել միայն պալատական լեզուն: Մի ուրիշ հանգամանք ևս աղնվականությանը կսովորեցներ այդ լեզուն, դա այն է, որ աղնվականության դգալի մասը իր կրթությունը ստանում էր պալատում, թագաժամանգի շրջապատռում, մայրաքաղաքի մեջ, ուրեմն չէր կարող չգիտենալ ոստանիկ լեզուն: Այսպես է վկայում Խորենացին:

«Ապա տանու Գնէլ իւր կին զՓառանձեմ ոմն յաղցէն Սիւնեաց, և թագաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս պարզես ամենեցուն նախարարացն: Որոց հաճեալ ընդ նա և սիրեալ ետուն առ նա զգաւակս

իւրեանց, զորս տոհալը, մեծապէս հանդերձեաց դարկու և զի՞նու, և առաւել ևս սիրեցին զնա»*):

Այսպիսի միջավայրում աղնվականը չէր կարող չսովորել ոստանիկ լիդուն, ուստի աղնվական դասը, բացի թագավորների ազգականներից, երկլեզվան էր, գիտեր իր տեղական բարբառը, միաժամանակ և զրաբարը: Հենց այդ երեսությը հանդիսանում էր գրաբարի թարմացման աղբյուրը, քանի որ՝ այդ աղնվականությունը զբարարի մեջ մուծում էր ժողովրդական լեզվի հարստությունը:

Անկախ ժողովրդից ցանկություններից, ուրիմն, աղնվականությունը մի տեսակ միջնորդ էր մի կողմից բարբառների, մյուս կողմից գրաբարի միջև, բարբառի հարստությունը մուծում էր գրաբարի միջև և նրան անընդհատ կենդանացնում, միաժամանակ և գրաբար լեզվաձեերը հաղորդում ժողովրդին, քանի որ թագավորն ու իր պարագը և ագմինիստրացիան ժողովրդի բոլոր հատվածների հետ զործ չունենին և, ըստ ֆիոդալական կարդերի, նրանց վարչական, հարկային, դատական և այլ իրավունքները սահմանափակվում էին իրենց զոմեններով: Եթե աղնվականները միմյանց հետ կապվում էին դրաբար լեզվով, ապա յուրաքանչյուրն իր հապատակների հետ կապվում էր սեղական բարբառով:

Ֆեոդալի բարբառային խոսվածքի մեջ չէր կարող չլինել գրաբարի հետքերը, որոնք հաղորդվում էին ժողովրդին: Ինչպես և նույն ֆիոդալի գրաբար խոսվածքի մեջ չէին կարող չլինել իր բարբառի տարրերը, որոնցից մի մասը կարող էր յուրացվել գրաբարի կողմից և ընդհանրանալ:

Այդ հանգամանքը մի կողմից, մյուս կողմից այն, որ գրաբարը կազմավորվել էր ժողովրդական լեզուներից, ստեղծել էր այնպիսի մի զրություն, երբ լեզվական շատ մեծ ընդհանրություններ կային ժողովրդական լեզվի և գրաբարի միջև:

Ուստի պիտք է ընդունել որ գրաբարի սովորական խոսակցական լիդուն, ինչպես օրինակ «Տուր զհաց», «Տամ նմա զջուր», «Առնում զնարկս իմոյ աշխարհին» և այլն, հասկանալի կլինեին ժողովրդին իրեն ուսարդ խոսակցություն, բայց գրաբարի ամբողջական սիստեմն այն ժամանակ ժողովրդի սեփականությունը չէր և լինել էլ չէր կարող:

*.) Ա. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 281, 1918 թ. Թէֆիլու:

Աշխարհաբար գրական լեզուն անգամ, որ իր սխառեմով ժողովրդական լեզուների պատճենն էր, նախահոկտեմբերյան շրջանում մեր ժողովրդի բարձմաթիվ հաւաքածներին հասկանալի չէր: Դրա համար հետո գնալու կարիք չկա, բերենք մեր հայունի գիտնականներից մեկի կարծիքը.

«Մեր բառարանը (խոսքն աշխարհաբար գրական լեզվի մասին է: — Ղ.) բալորովին գրաբար է և շատ կը տարբերի բաւն ժողովրդի խոսակցական լեզվէն: Ասոր համար է, որ հասարակ ժողովուրդը մեր գրական լեզուն կը կոչեցրաբ»*),

եվ, իրոք, որքան հասկանալի կարող է լինել մեր գրական լեզուն մի կիվիկեցու, մի համշենցու, մի սյունեցու կամ ազուրիսեցու: Ասածներիս հավատալու համար հարկավար է հաշվի առնել այդ բարբառների հակայական տարբերությունները:

Անվերապահորեն կարելի է ասել, որ հիմի հիշյալ բարբառների ներկայացուցիչներն իրար հանգիղեն և յուրաքանչյուրը խոսի իր բարբառով առանց հարմարվելու մյուսին, ապա նրանք միմյանց չեն հասկանա:

Այդպես է հիմա կամ մեր ժամանակներում, երբ հայերի զանազան հաւաքածներն այսքան հազորդվում են միմյանց հիմ, ապա ինչորեն կլինել հին Հայաստանում, երբ հայ գյուղացիները իրավտզուրկ էին և փեսդալիդմը անանցանելի անջրապես էր սահծծել նրանց մեջ, եթե ավելացնենք զրան նաև այն, որ 19-րդ դարի գյուղացին ավելի զարգացած պետք է եղած լինի քան 5-րդ դարի գյուղացին, այն ժամանակ պարզ կլինի, թե ինչու ժողովրդի բալոր հաւաքածները չեին կարող խոսել մի ընդհանուր լեզվով և պիտի ունենալոյին իրենց բարբառները:

5-րդ դարում ժողովրդական լեզուների գոյության փաստը մի այլ երեսոյթ ևս ապացուցում է, հայունի է, որ գրաբար լեզվի առաջին էտապը, մեր գրական լեզվի առաջին ժամանակաշրջանը, որ սկսվում է գրերի դյուտով, 412 թվին, և անում է միշտ 460 թ., ընդունված է կոչել «ոսկեղարյան» հայերեն: Այդ ժամանակի լեզուն ստացել է այդ կոչումը որպես գրաբար լեզվի լավագույն էտապը, որինակելի էտապը:

Հետագայում որակով վատանում է գրաբարը, ուստի և կոչվում է արծաթի գարի» գրաբար:

* 1 Հ. Անայշան, Հայ բարբառագիտություն, կմինյան ազգագրական ժողովածու, հատ. Բ, էջ 20, 1911 թ.:

Հարց է առաջ գալիս, թե ինչու առաջին շրջանի գրաբառը, երբ գրականությունը գետ նոր էր սկսվել, այնքան «կատարյալ» էր, մինչդեռ ազիլի ուշ, երբ կար զիր և գրականություն, ուրեմն լեզվի մշակման հնարավորություն, նկատում ենք գրաբարի որակի «անկրում», Պետք էր սպասել ընդհակառակները: Զէ՞ որ գրականության առկայությունը հնարավորություն է տալիս «տարերացին խոսողությունը» մշակելու կատարելագործել և գարձնել կանոնավոր գրական լեզու:

Շատերը գրաբարի այս առեղծվածը լուծում են շատ հասարակ ձեռով՝ ասվում է, թե գրաբարն աստիճանաբար աղավաղվեց, որովհետև ժողովուրդը գրագետ չէր և փչացնում էր լեզուն և իր թե՝ ժողովրդի կողմից գրաբար լեզվի փչացումն առաջացրեց հայերեն բարբառները:

Այդ տեսակեաը հիմնովին սխալ է:

Եթե իսկապես ժողովուրդը փչացնում էր լեզուն, ապա ինչու նա այդ ակաը սկսեց կատարել հարդ գարուց սկսած, ինչու մինչև հարդ գարը այդ փչացումը չէր կատարում նա, երբ զիր ու գրականություն չկար, ուրեմն և գրավոր կոնարու չկար լեզվի վրա:

Մի տեսակ միստիկական է գաւնում գրաբար լեզվի աղավաղման տեսակետը, որովհետեւ զիր ու գրականություն ունենալուց հետո ժողովուրդը շատ ավելի առիթներ կունենար կանոնավոր լեզվով խոսք լսելու, քան այն ժումանակ, երբ զիրը չկար: Ուրեմն պետք էր սպասել գրաբարի աղավաղում մինչև գրերի դյուտը և կանոնավորում՝ զիրը հնարելուց հետո: Ուրեմն՝ գրականության սկզբի լեզուն պետք է որ լիներ անկատար և դնալով ավելի կատարյալ դառնար (հարդ գարից հետո), մինչդեռ մենք տեսնում ենք ընդհակառակն, այն է՝ նախ լինում է գրաբարի «ոսկեզար», ապա «արծաթե գար» և ապա «երկաթե գար», Պարզ է, որ աղավաղման տեսակետը սխալ է և ոչինչ չի բացատրում: Եվ վերջապես՝ ինչ է նշանակում լեզվի աղավաղում: Անմիտ և աննպատակ և առանց պատճառի աղավաղում չի լինում: Կարող է պատահել, որ այդպիսի բան կատարվի մի քանի բառերի հետ, նրանց գրությունը սխալ վերծանվելու պատճառով, օրինակ՝ շագանակ բառը, որ եղել է շաղանակ, բայց բառամիջի դես սխալ վերծանվելով գ, տվել է բառի այժմյան պատկերը: Նույնը և շերամ բառը, որ գրված է եղել շերաս, սխալ-

մամբ կարգացվել է շնրամ և պահպանվել այդ սխալ ձեռվի: Բայց այդ կատարվել է հենց զբավոր լեզվի պատճառով, իսկ բանավոր լեզվի մեջ նման բաները լուրջ և օրինական և կամ իրբե լեզվաբանական երեվույթը բնողունելը անզգուշություն է լեզվի թեորիայի հանդեպ: Մեկ—երկու բառի աղավաղումը ոչ մի հետք չի թողնում լեզվի վրա, ուր մնաց թե փոխի նրան իսկ եթե ընդունենք, այնուամենայնիվ, որ աղավաղումների միջոցով է լեզուն փոխվում, այդ դեպքում պիտի ընդունենք, որ լեզվական գործունեության մեջ մարդիկ առելի խելացի բան, քան անընդհատ լեզվական աղավաղումներ կատարելը, դեռ չեն հնարամտել: Բայց այդ կլիներ խելապես մի զբարաննը մարդկային հասարակության հանդեպ: Մարդկային հասարակության կուլտուրան, այն էլ լեզվական կուլտուրան աղավաղումներով չէ, որ փոփոխվում է, որովհետեւ աղավաղումներ կատարողը կարող է լինել այս կամ այն անհատը, իսկ հասարակությունը ամեն մի անհատին ենթարկում է լեզվական հոկողության, քանի որ անհատի խոսած լեզուն իրենը չէ, իր ստեղծածը չէ, այլ հասարակությանը:

«Մարդկային մտածողությունը գոյություն ունի որպես անօցյալի, ներկայի և ապագայի բազում միլիարդ մարդկանց անհատական մտածողություն»*):

Ուրեմն ամեն մի անհատի լեզու սեփական գլխարկի, վերարկվի կամ նամակաթղթի նման չէ, որի հետ վարվի անհատը ինչպես ցանկանում է: Այդպես կարող է մտածել միայն լեզվաբանական մանուկ գիտությունը, իսկ հասուն գիտությունը, մարդսիզմ-լինիզմի սկզբունքներով տոգորված գիտությունը կարող է ընդունել միայն, որ «լեզուն հենց գործնական, ուրիշի համար նաև գոյություն ունեցող, և միայն դրանով իսկ ինձ համար ևս գոյություն ունեցող իրական գիտակցություն է»**):

Հետեարար ամեն մի անհատ իր լեզուն կոնտրոլի է հնաթարկում հասարակական լեզվի միջոցով:

Հետեարար անհավատովի է նաև, որ անհատը զբաղվի միայն լեզուն աղավաղելով: Եթի այդ անհավատալի է, ապա ուրեմն որքան մեծ անձառություն է խոսել ամբողջ հասարակայնության մտսին, վերագրելով նրան լեզուն աղավաղելու հարատե-

*). Կ. Մարկս և Փ. Էնգելս, Ծոч., տ. XIV, ստր. 86. 1931 թ.

**). Կ. Մարկս և Փ. Էնգելս, Ծոч., տ. IV, ստր. 21. 1931 թ.

աենգենց: Ժողովրդի հասցեին գա անտեղի մի հերյուրանք է Դրա ամենալավ տպացուցն այն է, որ ժողովրդի խոսվածքի յուրաքանչյուր ահսակը, բարբառը իրենից նիրկայացնում է մի խսկական, առանձնահատուկ սիստեմ, որ իր ներքին օրինաչափություններով, լեզվական տրամաբանությամբ ոչնչով չի զիջում ամեն մի գրական լեզվի: Ուրիշ հարց է, թե ամեն մի բարբառի միջ երեքում են տեղայնության, սահմանափակության գծերը, բայց դա հասկենալի է այն ընդհանուր սկզբունքով, որով բացատրվում են սոցիալական բոլոր երևայթները, այն է՝ «հասարակական գոյը որոշում է հասարակական զիանակցությունը»:

Ինչպիս տեսնում ենք՝ աղավաղման տեսությունը զիտական լեզվաբանության հետ որևէ գործ չունի, որևէ առնչություն չունի, հետեւբար բարբառների առաջացումը գրարարյան աղավաղման բացատրելը ճիշտ չէ:

Այդ բոլորից հետո շարունակում է մնալ չոտուզված ու չապացուցված այն հարցը, թե ինչո՞ւ զբարարը ավելի կանոնավոր էր գրականության սկզբնական էտապում, քան հաջորդում, ինչո՞ւ նախ լեզվական ըսկեղար», ապա «արծաթի դար» և ոչ ընդհակառակը:

Այդ պարզելու համար քնննենք հարցն ըստ էռթյան:

Գրաբարի «աղավաղումները» երկու տիպի են, մեկ՝ կառուցվածքի մթագնում կամ շաբանյուսական աղավաղումներ, մեղանչանք դրաբարի օրինաչափ ձեւերի հանդեպ, մեկ էլ՝ ձեւբանական աղավաղումներ, այսինքն սխալներ և մեղանչանքներ գրաբարի ձեւբանական օրինաչափությունների հանդեպ:

Այդ երկու տիպի աղավաղումների պատճառները կարող են լինել երկուս, մեկ՝ օտարամտածությունը կամ օտարաբանությունը, մյուս՝ բարբառամտածությունը կամ բարբառաբանությունը:

Օտարամտածություն ասելով հասկանում ենք օտար լեզվի սիստեմով հայերեն կամ մայրենի լեզվով խոսելն ու զբելը: Մեզ հայտնի է, որ հայ հեղինակները շատ գրքեր են թարգմանել հունարենից, ասորերենից և պարսկերենից, հետեւբար նրանք այդ լեզուները պետք է լավ իմանային: Եվ, իրոք, հայ հեղինակներից շատերը ուսում են սատցել այդ լեզուների երկիրներում, հատկապես Հունաստանում:

Նշանակում է՝ նրանց լեզվական մասնագությունը խիստ չափով ազդված պիտի լիներ այդ երկիրների լեզուներից, որի հետեանքով էլ հայերեն գրելիս գործածվել են հունաբան, պարսկաբան և ասորաբան ոճեր։ Հայունի է, որ գրաբար լեզուն Դ-րդ գարից սկսած ունի մի ամբողջ շկլսա, հեղինակների մի ամբողջ շարք, որոնք ներկայացնում են հունաբան դպրոցը (Մովսես Թերթող, Դավիթ Անհաղթ փիլիսոփիա, Անանուն, Անանիա Շիրակացի և այլն), Այդ հեղինակները, մտածելով հունարեն, գրել են հայերեն, ուստի և նրանց լեզուն խախառում է, ուրիշները կասեին՝ աղավաղում է զբաբար լեզվի սխտեմը։

Այդ նույն երեսւյթը տեղի է ունեցել Դ-րդ դարից ավելի առաջ, մեր կարծիքով, մեր զրականության հենց սկզբից, հենց այն հեղինակների կողմից, որոնց կրթությունը եղել է հունական, ուստի սխալ է զբաբար լեզվի մեջ հունաբանությունն ընդունել միմիայն Դ-րդ դարից։ Հունաբանությունը զբաբար լեզվի մեջ նկատվում է հենց Ֆ-րդ դարից սկսած։ Ուրեմն՝ սխալ է նաև այն տեսակետը կամ այն վարմունքը, երբ մի հեղինակի մոտ գտնում են հունաբանության հետքեր, շատապում են անմիջապես տեղափոխել այդ հեղինակին Ֆ-րդ դարից զեղի ետ, դեպի ուշ ժամանակներ, առնվազն Դ-րդ և երբեմն էլ Տ, Թ-րդ դարերը, չնայած նույնիսկ նույն հեղինակի հակառակ վկայություններին։ Այդպես են վարվել և շարունակում են վարվել մեր Ֆ-րդ դարի պատմագիրը Մովսես Խորենացու հետ, նույն ձևով են վարվում այժմ Միկիթարյանները Եղիշեի հետ, չնայած այն բանին, որ հեղինակն ասում է՝

«...Ճաւագրեմք զբագում հարուածոն՝ յորում պատահեցաք և մեք խել ականատեսք լինելով»*):

Օտարամտածությունը լեզուների խաչավորման միջոցներից մեկն է, եթե զա չափից շատ չէ։ Զափից շատ լինելու դեպքում օտարամտածությունը մթագնում է լեզուն, զրկում ձկունությունից։ բայց քիչ լինելու դեպքում ոչ թե վաստում, այլ օգուտ է տալիս։ Բանի որը լեզուն միենալուն սխտեմով չի կարող արտահայտել բոլոր ժամանակների և բոլոր շրջանների փոփոխված դիտակցությունը, ուստի օտարամտածության օգնությամբ

*.) Եղիշեի Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 11.

հազարդվում են գիտակցված իրականության այնպիսի երեսով լույսներ, որոնք յուրացը ել է ուրիշներից ավյալ հասարակությունը իր զարգացման ձանապարհին:

Ենթի համար որոշ չափի օտարամտածությունը նույնքան անհրաժեշտ է, որքան բառական փոխառությունը: Յուրաքանչյուր լիդու լեզվական մտածողության որոշ կայսւն սիստեմ ունենում է միշտ, սակայն, եթե այդ սիստեմն ինքն իրեն սպառում է և անզոր է լինում արտահայտելու փոփոխված գիտակցությունը, օտարամտածության երևոյթների յուրացումը դառնում է անհրաժեշտություն:

Ան օտարամտածության այդ գեղքերի երևոյթը գրաբարի մեջ պուրիստների կողմից ընդունվում է իբրև զրաբարի աղավաղում:

Մեր կարծիքով գրաբարում բայի ներխուժումը որոշիչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի միջև օտարամտածության արտահայտություն է, որ հաճախ կդառնենք հունարան հեղինակների մոտ, նաև Խորենացու, Սկեռոսի և ուրիշների:

«...զբաջեց արդեքք եթէ զվատաց անցեալ ունիցի զակով...»)

«...յունականաւն վարէին գրով...»:

(Համեմատիք՝ լու. Solon venit atheniensis):

Միսրապյան շրջանի մի շարք հեղինակների մոտ այդ նկատելի չէ (Եղինիկ, Հովհանն Ռոկեբերան, Աստվածաշնչի թարգմանիչներ և այլն):

Գրաբարը լեզվի «աղավաղման» երկրորդ պատճառը բարբառամտածությունն է:

Ետոսկեղարյան հեղինակների մոտ հաճախ ենք հանդիպում նախադասությունների այնպիսի կառուցվածքի, որոնք հիշեցնում են ժողովրդական լեզուները:

Մեր կարծիքով, ուկեղարյան շրջանի և հոտուկեղարյան շրջանի որոշիչի և հատկացուցչի առաջադաս գործածությունը գրաբարինը չէ, այլ ժողովրդական լեզվինը, որից չեր կարող երեք խոռափել գրաբար լեզուն:

Գրաբարը լեզվի հոլովումն ու խոնարհումը կուռ սիստեմ և ներկայացնում, եթե հետևենք օրինաչափական ձեւերին, սակայն այդ ձեւերից կտարարվում են բազմաթիվ շեղումներ. այդ ևս պետք է բացատրել ժողովրդական լեզվի աղբեցությամբ:

Գրաբարի մեջ անբացատրելի համարվող, կամ իբրև աղավաղում ընդունվող բաղմաթիվ ձեւեր ու երևոյթներ կան, զրանք վերաբերում են և շարահյուսության, և՝ ձեւաբանության, և՝ բառապորձածության:

Այդ բոլոր շեղումները բացառքել անհատական աղավաշումսով, չի կարելի, ոչնչով չի էլ հիմնավորվում, ուրիմն պետք է որոնել մի այլ պատճառ, բայց լուրջ և հիմնավորված:

Մեր կարծիքով լեզվական փոփոխությունների կամ աղավաղումների երկրորդ պատճառը կարող էին լինել ժողովրդական բարբառները:

Իբրև կենդանի լեզու, նրանք թափանցում են գրական լեզվի մեջ (նաև միմյանց մեջ) և ստեղծում այն անկանոնությունները, որոնք զիավում են իբրև «աղավաղումներ». օրինակ՝ գրաբար լեզվի հոգնակի հայցականը ունենում է և հոլովակազմիչ և տարբերվում է ուղղականից, մինչդեռ ժողովրդական լեզվի հայցականը միշտ նման է ուղղականին (առարկայի առումով վերցրած գոյականը) ուստի նորենացու:

«...ընկեց ի մէջք օրիորդին Ալանաց և շատ սավեցոյց զմէջք փափուկ օրիորդին» և կամ Եղիշեի «և արք պարսիկ... կալան և ետ ի ձեռս նորա» հայցականների ք-ն պետք է համարել ժողովրդական լեզվի աղդեցություն: Ուրիմն գրաբարի «աղավաղումը» կատարվել է գրաբարի լեզվաձեեցը ժողովրդական լեզվի ձեւերով փոխարինելու միջոցով:

Գրաբար լեզուն ունի չ հոգնակի, բայց Փարակեցու մոտ զտնում ենք եր հոգնակի ունեցող բառեր («հայեր», «հարկեր»):

Հետևաբար գրաբարն աղավաղվել» է ժողովրդական հոգնակիով՝ գրաբարինը փոխարինվել է աշխարհաբարի հոգնակիով:

Այս և նման բաղմաթիվ երեսույթները ցույց են տալիս, որ գրաբարը չէ, որ աղավաղվում է, որպեսզի հետո ստեղծվեն բարբառներ, այլ ընդհակառակին, գրաբար լեզվի կողքին գոյություն ունեին ժողովրդական լեզուներ, որոնց այս կամ այն ձեւերը թափանցելով գրաբարի մեջ խախտում էին նրա սիստեմը: Շատերը միամտաբար ստանում են այն տպափորւթյունը, թե գրաբար լեզուն աստիճանաբար «աղավաղվում» է և այդ «աղավաղումը» տանում է դեպի բարբառների գոյացումը:

Գրաբարի զուգընթաց ժողովրդական լեզուների ասկայությունը կասկածից վեր է, որովհետև ոչ մի այլ կերպ բացարձել գրաբարի սիստեմի խախտումը հնարավոր չէ: Լեզվի «ներքին» օրինաչափ զարգացումն հասկացողությունը հնարավոր է ընթառնել միայն այն իմաստով, որ լեզվի ներսում ստեղծվում է

սիստեմի միօրինակությունն և համաշափությունն Հաստացական պիտուկցությունը ուղղվում է միշտ այն կողմը, որն ավելի հասարակականորեն շահավետ և անտեսական է (խոսքը վերաբերում է լեզվական օրինաչափություններին), որովհետեւ այդ ձևով հեշտանում է լիզուն։ Անգամ օտար փոխառությունները ամեն մի լիզու հարմարեցնում է իր սիստեմին, միօրինականացնում է իր լեզվական երեսըթների համաձայն իսկ սեփականացված ձևերն այդ միօրինականացման հնթարելվում են էլ ավելի ուժեղ։ Դրա ամենալավ ապացույցն է զրաբար լիզվի հոլովման սիստեմը, որ բացասություններ չպիտի, եթե նկատի չառնենք մասնակի շեղումները, որոնք բացատրվում են զրաբ ազգեցությամբ, ժողովրդական լիզվի աղդեցությամբ։

Դրա ապացույցն է նաև խոնարհութերի թվի կրճատումը հայերենում (զրաբարում՝ 5, ժամանակակից հայերենում՝ 2):

Միայն այն ժամանակ, երբ զրաբ առնված ձեերը լիզուն չի կարողանում հարմարեցնել իր սիստեմին, նա իր մեջ ընդունում է իր սիստեմին հակառակ նոր օրինաչափություններ։ Ուստի զրաբարին օտար կամ անհարազատ լեզվական օրինաչափությունները զրաբարին չեն, այլ զրաբարին զուգահեռ գոյություն ունեցող ժողովրդական բարբառներինը, ուստի զրաբարի շեղութերն ու բացասությունները, որոնք հիշեցնում են բարբառների ձևերը, ամենալավ ապացույցն են 5-րդ դարում և ավելի առաջ բարբառների գոյության։

Կարելի է առարկել, թե մեկ երկու ձեերը, որ հիշեցնում են բարբառները, զուցե նոր զոյացութեր են հենց իրեն՝ զրաբարի մեջ, և որ այդ երկու օրինակները չեն կարող ապացուցել ժողովրդական լիզունների ամբողջ սիստեմի առկայությունը։

Այսուղղ սակայն լեզվաբանության մեջ պետք է կիրառել այն, ինչ որ կենդանաբանության մեջ ընդունված է՝ մարմնի անդամներից մեկի միջոցով վերականգնել կենդանու ամբողջ ֆիզիոլոգիական կառուցցվածքը։

Խոկապես, ժողովրդական լիզվի ինչպիսի երեսըթներ կան զրաբարի մեջ։

1. Արոշիչի և հատկացուցչի առաջազատ գործածությունը։

Գրաբարը ժողովրդական լիզուններից հենց աարբերվում է շարահյուսական այլ ձեերով, ժողովրդական լիզունների մեջ որո-

շիչի և հատկացուցչի հետադաս գործածությունը անհնաբին է և անըմբանելի:

2. Հոգնակի հայցականի և ուղղականի նմանությունը:
3. Ներդոյական հոլովի գործածությունը*):
4. Նախադասության անդամների շարադասության տարբերությունը:

Այդ ամենը վկայում էն, որ այդ ձևերը ոչ թե պատճեական են, այլ մի առանձին բարբառասիստեմի մասնակի վկայություններ:

Հետեւաբար, զրաբարի «անկումը» ետոսկեզարյան շրջանում բացարձում է ժողովրդական լեզուների ներթափանցմամբ, միաժմամանակ այդ «անկումը» ապացուցում է ժողովրդական լեզվի գոյությունը զրաբարին պուդահու և զրաբարի գոյության ամբողջ ժամանակաշրջանում:

Ինչու, սակայն, զրաբար լեզուն ապրում է «անկում», այսինքն՝ ինչու զրաբար լեզուն ճշրդ դարի ճշրդ կիսին ավելի ուժեղ է ենթարկվում ժողովրդական լեզուների ազգեցության, քան առաջին կիսին:

Դրաբար լեզվի խոսակցական բազան թագավորական պալատն էր և մայրաքաղաքը,

Այդուեղ լեզվական կրթությունն էին ստանում բոլոր նրանք, որոնք առնչություն ունեին կամ կապված էին այդ պալատի հետ: Մայրաքաղաքի հասարակայնությունը օրինականությունն էր տալիս լեզվաձևերին՝ հասարակականորեն վերաբռնիկ տալիս ժամանդար մշակված լեզվաձևերը:

Առաջին հեղինակները այդ միջավայրի ազգեցության ներքո զրաբարը շատ լավ գիտեին և պահանջված դեպքում կարող էին ստուգել: Ինքնակոնտրովի ենթարկել իրենց, ուստի նրանց լեզուն «մաքուր» զրաբարյան էր: Բայց անտ անցնում են ժամանակները, պալատը կորցնում է իր նշանակությունն առանձնապես 429 թվից հետո, երբ քաղաքում է գոյություն ունենաւուց հայ թագավորությունը նաև անվանապես, մայրաքաղաքը ևս կորցնում է իր նշանակությունը, ցրվում է զրաբարախոս

*) Տե՛ս Մ. Խորենացւոյ Պատմութիւնը՝ Հայոց, Ետքար, էջ 33. «...ի բարձրավանդակումն կուռ կալովի տեղուց...»:

հասարակայնությունը, թուլանում է զբարարի խոսակցական բարգան, կուլտուրական կենտրոնները գտնում են զանազան ազնվականների պալատները, որ բարբառային խոսակցությունից զերծ չէին:

Բնական է, որ զբա հետեւանքը պետք է լիներ ժողովրդական լեզուների ուժեղ ազգեցությունը զբարարի վրա: Ահա ինչու զբարարի զարգացման սիեման զվարի վրա է կանգնած, այսինքն, նախ կատարյալ էտապն է, ապա՝ աստիճանաբար «անկումը»:

Գրաբարի «անկումը» պետք է բացարել և մեկ ուրիշ հանգամանքով:

Մեր զբովների զգալի մասը զեղջուկներ են, զեղջկական ծագում ունեցող մարդիկու նրանք ազնվականության կողմից վերցվել են իրեն անձնական սպասավորներ:

Դեղջուկները սպասարկել են ազնվականությանը ամեն ինչով. ազնվականության ավրամատը, սեպանի բոլոր բարիքները, հազուսաը, արդ ու զարգաբանքը, բնակելի շենքերը, գեղարվեստական ճաշակը բավարարող բոլոր իրերը ստեղծվել են զեղջուկների ձեռքով: Դեղջուկները սպասարկել են ազնվականներին նաև զիր ու զբականությումը: Ազնվականները ուշիմ զեղջուկ մանուկներին վերցրել են և զիր սովորելու ավել մի կողմից ազատելով իրենց այդ ծանր բեռից, մյուս կողմից զբակեա զեղջուկներին պահել իրենց պալատներում քարտուղարության, կամ զրով սպասարկվելու համար: Այդպիսի գեղջուկ է եղել Մեսրոպ Մաշտոցը, հայերեն գիր հնարազը, այդպիսին էր Դավար Փարոպեցին, այդպիսին էր Խորենացին և այլն:

«Իսկ որ զատայցն զիս պարեղօտիւք ի ծառայութեն, է աշխարհիս և ազատութեան եղի մեկ առիթ, տեր Ազան՝ քո տեառն քեսի էր»*):—իսկ այն մարդը, որ պարեղոտիւք այս աշխարհի ծառայությունից (այսինքն՝ գեղջուկ վիճակից—Դ.) ինձ դատեց և առիթ եղավ մեր ազատության (ազատ վիճակ ունենալուն—Դ.) քո, տեր, քեսին էր, տեր Ազանը.—վկայում է Փարոպեցին իր մասին:

Ազնվականության պետքերին սպասարկելով՝ ժողովրդի այս տաղանդավոր զավակներն օբեկտիվորեն կատարել են համաժո-

*.) Դ. Փարոպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ..., էջ 158, 1904 թ.:

դովիրդական դործ, նըանք ստեղծել են մեր ժողովրդի պրաբարաւ լիզու կուլտուրան: Այդ գրելու ընթացքում նրանք գրաբարն օգաագրդել են իրեն սովորած, երկրորդ մայրենի լիզու, այդ պատճառով էլ հաճախ գրաբարի մեջ մուծել են իրենց լեզվական մատծողության տարրերը: Դա գիտել է իրեն գրաբարի աղավաղում, մինչդեռ դա ժողովրդական լեզվի թափանցումն է լեզվի մեջ:

Այդուհեղից կարելի է անել մի կողմնակի եզրակացություն, այն զրոյները, որոնց մոտ ժողովրդական լեզվի տարրերը շատ ուժեղ են, այսինքն՝ որոնք զրաբարից շատ սխալներ են անում, նըանց մայրենի լեզուն եղել է բարբառը, նըանք ծագում մոլ գեղջուկ են:

Այդպիսի մի գեղջուկ գրող է նաև կարծեցյալ Շապուհ Բագրատունին:

Ասացինք վաղ ժամանակի զրաբարի մեջ ժողովրդական լեզվի հետքերը քիչ են, որովհետև գրաբարի խոսակցական բազան ուժեղ էր, և հեղինակները լավ են սովորել կենդանի լեզուն և քիչ սխալներով գրել, բայց երբ ցրվեց այդ բազան, տարրալուծվեց, զրաբարի խոսակցական բազան մանրացավ, թուլացավ, հեղինակները, վատ սովորելով կամ գրքերով սովորելով զրաբարը, ամելի էին ենթակա ժողովրդական լեզվին: 9—10-րդ դարերում, երբ զրաբար լեզվի խոսակցական միջավայրը անհետոնալու վրա էր արգեն, զրաբարը սովորում էին միմիայն զրքերով և բնական է, շատերին չէր հաջողվում լիակատար կերպով տիրապետել այդ լեզվին, ուստի նըանք սխալներ շատ էին անում: Խոկ այն զեպքում, երբ գրում է մեկը, որը զրաբարը սովորել է միայն զրքով, չի խոսում զրաբարով և գիտե իր մայրենի բարբառը միայն, այդպիսի մեկը զրաբար լեզվով գըւրելիս պիտի խառնի զրաբարի սխակեմն աշխարհաբարին, հատկապես իր մայրենի բարբառին:

Այդպիսի մեկը չի էլ հնթաղրում, որ ինքը սխալներ է կատարում, քանի որ նա ամեն անդամ չէ, որ գիտակցում է զրաբարի լեզվական նորմաները: Սխալները կլինեն մեծ մասմբ ոճի և շարադառության մեջ:

Այն դեպքում, սակայն, երբ գրողը զրաբարի խոսակցական միջավայրում չի, զրաբարը սովորել է գրքով, ինքնու-

ըույն պրելիս սխալներ կտնի նաև ուղղագրության մեջ, այսինքն գըաբարի հնչյունական սխառեմի մեջ։ Այդ սխալները բավական պարզությամբ կդրսեգործն նրա բարբառի առանձնահատկությունները։

Մեր բարբառների հնչյունական սխառեմի հնագույն վիճակի մասին շատ տեղեկություններ չունենք։ Ձկան ուսումնասիրություններ, չկան տեքստեր, իսկ եթե լինեին էլ, պըի տանված չպիտի լինեին դիտական այնպիսի մի մեթոդով, որը գաղափար տար ամբողջ լեզվասիստեմի մասին։ Ուստի մեր բարբառների հնչյունական սխառեմի հնագույն վիճակի մասին բնագիր-տեղեկություններ ունենալու անհնարին է։

Բարերախտաբար կա մի միջոց, որով կարելի է մոտավոր չափով վերականգնել բարբառների լեզվական սխառեմի հնագույն վիճակը կամ գաղափար կաղմել նրա մասին։ Այդ միջոցը բարբառային տիպի սխալների ուսումնասիրությունն է։ Այդ տիպի սխալներ հեղինակները կատարել են հնագույն շրջաններից սկսած, կատարում են նաև այսօր։

Այդ տեսակեաից ևս զասական և զարմանալի երևույթ է կարծեցյալ Շապուհ Բագրատունու աշխատությունը։

Ուղղագրական ինչ սխալներ ունի Շապուհ Բագրատունին և ինչ են ցույց տալիս նրանք։

1. Բառասկզբին գրաբարի ձոյնեղների դիմաց չափազանց հաճախ են պատահում շնչեղ խուլեր, այսինքն թ, դ, զ, ա, ջ հընչյունների դիմաց վ, թ, ժ, ց, չ հնչյուններ։

Օրինակներ.

«...զիմրդ կարացից սուր մերցուցանելի կենսավեր փայտ իւաչին» (12)*:

«...հակէին զիշերն ամենայն բաղում աշխատութիամբ» (13):

«...զարմացաւ ընդ հավասս կնոշն...» (13):

«...յանկարծակի նստաւ չորիս...» (13):

«...ոչ կարաց շարժել ի տեղուչէն» (13):

«Եւ դեմ երեալ երթալ ի վերայ Դարբանդին...» (18):

«...դէնք քորայ մի կարացին տալ խոց թշնամեաց քոց...» (27):

«...արդ ունիմ դիմիր ձեռին Մահմետի հօր քո...» (26):

*). Փակագծերում նշվում են գրքի էջերը

«...և աղատագունդն ընտրածք փիւրոց...» (62)*:

«...այս ի ամէ որ ի նեղութիւն և արքելք եմ կացել...» (63):

«...ոչխարք քերք և պարարտք...» (63):

«...և զմեծ շահաստանն զԹվին...» (72):

«...ով իշխան, ահայ աւուրս որսոյ, բազում լապըստկանք են նստուցել ծառայքն մեր, արի երթանք որսանք։ Եւ նայ հեծաւ չորի և զնաց դհետ նոցայ և հասան եղբ աղեաց, որ Վարդակիոյն կոչեն» (75):

«...և նա արքելից զչորին...» (75):

«...քաջ մարդիկ աղքէն Գնունեաց...» (82):

«...աւձին ցագն լաւ է սպանանել որ ոչ վիշապանան» (84):

2. Այդ սխալները կարելի էր համարել արտագրողի սխալներ, (թեև անզրագետ արտագրողն անդառ չէր կարող կատարել այդպիսի սխալների սխալ), եթե չինեին հակադարձ տիպի բարբառային սխալները, այսինքն՝ զըողը, որովհետեւ գրաբարի ձայնեղները կարգալիս արտասանում է շնչեղ խուլ ուստի գրելու ժամանակ իր արտասանության շնչեղ խուլը զըում է ձայնեղի նշանով։ Ուրիշ խոսքով՝ փ, թ, ք, ց, չ-ի փոխարեն զըում է բ, դ, զ, ձ, չ, քանի որ կարդալիս նա արտասանում է շնչեղ խուլ։

Օրինակներ՝

«...և անկարծակի դարդեան արք վաճարականք դարհուրեցան» (1)*:

«...զդաւիկ զհայրն Մուրկայ» (3):

«...շինեալ զամրոցն ար արն Խորեան զետոյ» (4):

«...պատուական Բայտ խաչին զտանիցէ թէ ուը է» (8):

«...և ապա ձաշակիմ միս կամ այլ փաքուկ կերակուր» (8):

«...եւ արև տիկինն, յերեպագ արգային և առաջեալ գնաց զճանապարհն իւր» (12):

«...և պատուական մորդս գաղանաց...» (18):

«...զոր ի թղոին զըեալ էր...» (28):

«...զի անխարն լինիցի յիշատակ...» (34):

«...զոր զէ պատեհ...» (66):

«...զոր զայդ դողուս և այլազի ելթաս...» (66):

* Փակագծեցում նշվում են պըթի էլեբը

«...գէր զէ եկել» (74)*:

«...իջաւ ի ձիոցն և ընդացաւ հետևակ ընդ առաջ նորայ...»
(63):

Այսպես կարող է սխալվել միայն ինքնուրույն շարադրողը,
բայց ոչ երբեք արտադրողը: Ուրիմն այն սխալները, որ մենք
հանդիպում ենք Շապոհի զրքում, դա հենց իրենն է,
Շապոհինը:

Յ. Խուլ հնչյունների զիմաց շատ հաճախ գանում ենք ձայ-
նեղներ, այսինքն՝ պ, տ, կ, ծ, և հնչյունների փոխարեն գտնում
ենք բ, դ, դ, ջ և ընդհակառակն (տեղաշարժ գեպի ձախ):

Օրինակներ՝

«...սկսաւ զմեծայմեծ բանեառու տակցի խլել» (3)*:

«...և տուջ ել դնաց երկիրն Վասթուրականի» (9):

«...և արեալ դքաղաքն Տորբանդ» (18):

«Եւ Աշոտի եղեն Դ. որդի և անուանեաց զավագն՝ Գրի-
գոր Դէրեն, և միւսն Կագիկ, և երրորդին՝ Համագար» (39):

«...և նոքա վսկահեալ ելին առ Դէրենն...» (47):

«...Կարի ամպոխն են...» (70):

«...երթային ընդ դաշտն անտեպ»:

«...հար ըուլմբովա» (70):

«...եհար ըուլմով ի կողն նորա» (70):

Այդ երկու տեղաշարժերի հետևանքը տալիս է երկաստի-
ճան խլագուրկ բաղաձայնական սխատիմ, որ հարուստ է շնչեղ
խուլերով:

բ փ

դ թ

ձ շ

ջ չ

դ ք

Այդ խմբին են պատկանում Տիգրանակերտի, Մալաթիայի
և Ռոդոսայի բարբառները: Հետևաբար Շապուհը խոսում էր
այդ բարբառներից մեկն ու մեկով: Այժմ պետք է որոշել, թե
դրանցից որը կարող էր լինել

*) Փակագծերում նշվում են գըթի էջերը:

4. Այս հարցին պատասխանում է հեղինակի մի ուրիշ սխալը, դա ու-ի և թ-ի սխալն է. հեղինակը շատ հաճախ շփոթում է այդ երկու զըերը, ուրիշն և հնչյունները, և գրում սխալ:

Օրինակներ.

«...արք վաճարականք...» (1)*:

«...զթոգաւորութիւն Հորամոց (3), գմիծայմեծ բանձառս ... (3) որում կա խաչափայտն ձեռ...» (9):

«...փայտ խաչին ձեռոյ (9). Բագաւորին մեռո» (9):

«...էար զամենայն յերկիրն (20). առքայն յերուսաղէմայ (21). արդ լուր կաց» (21):

«...յառուցեալ գնաց մաւս ար տապանն» (23) և այլն:

Օրինակները վկայում են, որ հեղինակը թ և ո հընաչյունների պարզ գտվափարը չունի: Հավանական պիտի համարել, որ այդ երկու հնչյունների արտասանությունը Շապուհի բարբառում թուլացած և շփոթված էր: Այդպես է Կիլիկիայի բարբառում Զեյթունի խոսվածքի մեջ, Խոտրջրի բարբառում, Հաղբութի շրջանի Տումիի խոսվածքում և այժմ Լինինականի շրջանի Փանիկ գյուղում: Եշանակում է հեղինակը խոսել և մի այնպիսի խոսվածքով, որը պատկանում է Մալաթիայի բարբառին, բայց ենթարկված է Կիլիկիայի բարբառի աղղեցությանը: Ո՞րը կարող է լինել այդ խոսվածքը:

Ստեփանոս Սյունեցու վկայությամբ, մեր խոշոր բարբառներից մեկն է 4-րդ Հայքի բարբառը:

Աշխարհոգրութեն Մալաթիան ընկնում է 4-րդ Հայքին մոտ շրջաններում, հետեւաբար կարծեցյալ Շապուհ Բագրատունին խոսել է Զորբորդ Հայքի բարբառով:

Այս եղբակացությունը թելազրում է անելու հետեւյալ նոր եղբակացությունները.

1. Մեզ հայտնի է, որ Զորբորդ Հայքում Բագրատունիներ չեն եղել, նրանց հողատիրությունը եղել է Հյուսիսային նահանգներում, հետեւաբար զրբի և եղինակը Բագրատունին չեն:

2. Մալաթիայի բարբառի հնությունը հասնում է 10-րդ դարին, որովհետև անվիճելի է, որ կարծեցյալ Շապուհ Բագրատունին 10-րդ դարի հեղինակ է:

*) Փակագծերում նշվում են գրքի էջերը:

Յ. Սյունեցու հիշատակած Զորբորդ Հայքի բարբառը ընդառկում է Տիգրանակերտի, Մալտթիայի և Ռողոսառյի (մասամբ Խարբերդի և Յերզնկայի) բարբառները։ Նրա հիմնական հատկանշական գիծը ձայնեղների տեղաշարժն է դեպի հեռավորաջ (երկրորդ աստիճանի տեղաշարժ) և խուլ հնչյունների տեղաշարժն է դեպի ձախ, որից ստացվում է երկաստիճան բազաձայնական սիստեմ, շնչեղ խուլերով առատու Այդ դեպքում Մալտթիայի և մյուս բարբառների սիստեմի հնությունը կհասնի 7-րդ դարին։

4. Հայերեն բարբառախմբերի հիմնական սիստեմը գոյություն սաներ 7-րդ դարում նույն հարաբերությամբ, ինչպես որ այժմ է։

Р е з ю м е

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ НАРОДНОЙ РЕЧИ

В 1921 году была издана неизвестная рукопись, рассказывающая об исторических событиях в Армении до начала 10-го века (914—20 г.). Рукопись издателями была озаглавлена: «Шапуха Багратуни История Армении»^{*)}; у историка 10-го века, Ованеса Драсханакертци, упоминается некий Шапух Багратуни, который написал историю на крестьянском языке.

Это упоминание повторяется у некоторых последующих историков почти в таком же духе.

Рукопись этого историка не была найдена, но она интересовала как историков, так и лингвистов. Поэтому то издание вышеназванной рукописи под именем Шапуха Багратуни вызвало оживленный интерес. Рукопись не имела титульного листа и поэтому издатели сами на основе своих исследований пришли к заключению, что эта рукопись должна быть «Историей» Шапуха Багратуни.

«История» написана на древне-армянском языке, но с большим количеством языковых и орфографических ошибок. Исследование всех этих ошибок может выявить весь тот слой народной речи, который просочился в рукописи, благодаря тому, что автор плохо знал древне-армянский язык и в процессе изложения мыслил на своем родном диалекте.

Можно было бы сделать предположение, что изменения в языке внесены переписчиками последующих веков, но характер этих изменений и ошибок не оставляет сомнения,

^{*)} Պատմութիւն Շապհոյ Բագրատունու. Ի լուր աժին Գ. Տեր-Մկրտչեան
և Մելքոն Եղիսաբետի, Եջմիածին, 1921:

что они допущены самим автором. Обычно переписчики старались придерживаться тексту, поэтому их ошибки бывали случайные, относящиеся к какой нибудь морфологической или орфографической категории или же коверканию какого либо слова. Но, присматриваясь внимательнее к тексту Багратуни, можно заметить, что ошибки допущены по определенной системе языкового мышления, по которой можно восстановить тот диалект, на котором говорил автор.

В настоящей статье нами разобрана лишь одна сторона этих ошибок, а именно, нарушение системы согласных древне-армянского языка в начале слова.

Известно, что в древне-армянском языке по качеству произношения имелись три степени озвончения по следующей схеме:

<i>բ</i>	<i>պ</i>	<i>փ</i>	б	п	փ
<i>դ</i>	<i>տ</i>	<i>թ</i>	д	т	թ
<i>ձ</i>	<i>տս</i>	<i>ց</i>	ձ	тс	ց
<i>ջ</i>	<i>տշ</i>	<i>չ</i>	ժ	тш	չ
<i>զ</i>	<i>գ</i>	<i>ք</i>	զ	գ	ք

В ошибках предполагаемого Шапуха бросается в глаза последовательное нарушение этой системы, а именно, замена звонкого ряда *բ, պ, դ, լ, զ* глухими придыхательными, т. е. передвижение согласных вправо (второе передвижение согласных звуков в системе армянских диалектов). Одновременно с этим замечается озвончение согласных глухого ряда т. е. передвижение влево:

<i>պ</i>	<i>տ</i>	<i>կ</i>	\rightarrow	<i>բ</i>	<i>դ</i>	<i>թ</i>
п	т	к	\rightarrow	բ	դ	թ

После этого получается система согласных в две степени озвончения, а именно:

<i>բ</i>	<i>պ</i>	<i>փ</i>	բ	պ	փ
<i>դ</i>	<i>տ</i>	<i>թ</i>	դ	տ	թ
<i>ձ</i>	<i>տս</i>	<i>ց</i>	ձ	տс	ց
<i>ջ</i>	<i>տշ</i>	<i>չ</i>	ժ	տш	չ
<i>զ</i>	<i>գ</i>	<i>ք</i>	զ	գ	ք

Что такое передвижение согласных не случайное, доказывает тот факт, что автор допускает обратные своей системы ошибки т. е. глухие придыхательные звуки передает знаками, соответствующие звонким согласным, например:

«*Ջէ*» вместо «*Հէ*», «*բափուկ*» вместо «*փափուկ*», «*արգային*» вместо «*արքային*» и т. д.

Такие ошибки только возможны в том случае, если текст излагается, а не переписывается, так как в этом случае у пишущего, который в устной своей речи произносит глухие придыхательные в тех случаях, когда в древне-армянском языке имеются звонкие, возникает сомнение и относительно тех случаев, когда в древне-армянском языке начинается слово с глухим придыхательным звуком. Поэтому и он допускает обратные ошибки, т. е. он не разбирается в разнице произношении букв, соответствующих звонким и глухим придыхательным звукам. Это не оставляет никакого сомнения, что допущенные в рукописи ошибки принадлежат автору.

Выяснив систему согласных в живой речи самого автора, можем притти к следующим выводам:

1. Автор говорил на Малатийском диалекте, так как этот диалект по системе передвижения согласных буквально совпадает с системой ошибок автора.

2. Автор не является Багратуни, значит он не Шанух Багратуни, так как Багратуни могли говорить на диалекте Тарона, Муша или Спера (диалект Карина), потому что они имели владения лишь в этих районах.

3. Система Малатийского диалекта засвидетельствована в 10-ом веке, значит имеет тысячелетнюю давность, при чем эта система не нарушена до сих пор; а если иметь ввиду показания Анонима, писателя 7-го века, указывающего, что звонкий согласный (губной) в некоторых диалектах произносят, как глухой придыхательный, то свидетельства о существовании системы согласных Малатийского диалекта надо отодвинуть еще на три века вглубь древности.



ԳԱԱ Եիմնարար Գիտ. Գրադ.



FL0629879

(204)

4ми
1821

доктор проф. А. ГАРИБЯН

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ НАРОДНОЙ РЕЧИ

Изд. Цел. Института, Ереван, 1910 г.